

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ
ԽՈՑԵԼԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ**

ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՅՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻՆ
ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D
1.	ԵՐԱՇՏ	Թերսնում	Բերքի/եկամուտի կորուստ	Ռիսկի փոխանցում/բերքի ապահովագրություն
2.				Բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում, հատկապես երեխաների, հղի կանանց, կերակրող մայրերի սննդակարգի վերաբերյալ
3.				Հիդրոոլերևութաբանական ագրոծառայությունների հասանելիության ապահովում /Բնապահպանության նախարարության հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն/
4.				Ջրի խնայողության նոր տեխնոլոգիաների և երաշտադիմացկուն մշակաբույսերի ներդնում
5.	Թունավորում	Կաթնամթերքի պահպանման և պահեստավորման խնդիր	Արոտավայրեր տանող և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում	
6.			Կաթի մթերման արդյունավետ մեխանիզմների ստեղծում	
7.	Սանիտարա- հիգիենիկ վիճակի վատթարացում	Խմելու ջրի անբավարար կառավարում	Խմելու ջրի մատակարարման ցանցի նորոգում, մաքրման համակարգի տեղադրում /կենսաբանական կամ քիմիական/	
8.			Թումանյանի բժշկական կենտրոնում և համայնքի 6 բնակավայրերի բուժկետերում լուծել մաքուր ջրի	

			Բուժկետերի ¹ և բուժճառայությունների անբարվոք վիճակ ²	մատակարարման, մշտական հոսանքի և սանհանգույցի հարցը
9.				Քարինջ, Մարց, Ահնիձոր և Աթան բնակավայրերում բուժկետերը վերանորոգել
10.				Ամառվա տաք եղանակներին համայնքի բնակչության առավել խոցելի խավերի համար կազմակերպել առողջության շարժական մոնիթորինգի ճառայություն /բնակավայրերի պլանավորված այցել/
11.				Մարցում նախադպրոցական հասակի երեխաների կազմակերպված ուսուցման, ֆիզիկական զարգացման և խնամքի պատշաճ պայմանների ստեղծում /մանկապարտեզ կամ նման մի կառույց գոյություն չունի, որտեղ ուշադրության կենտրոնում կլինեն նաև ծայրահեղ եղանակային պայմաններում երեխաների առողջական վիճակը/
12.				Համայնքում կազմակերպել արագ արձագանքման և առաջին օգնության կամավորական թիմ /առաջարկվում է տեղակայել Լորուտի բուժկետի տարածքում, բուժկետին կից, կարողությունը առկա է/
13.				Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված համայնքային /մարզային/ բուժճառայությունների պլանավորում
14.	ԿԱՐԿՈՒՏ	Թերսնում	Բերքի/եկամուտի կորուստ	Նույնը, ինչ D1-D3 կետերում
15.	ՍԱՍՏԻԿ ՇՈԳ	Արևահարություն, հատկապես երեխաների մոտ,	Խմելու ջրի անբավարար կառավարում	Նույնը, ինչ D7 կետում

¹ Բուժկետերի անբարվոք վիճակ, ջրագծի և սանհանգույցի, հոսանքի բացակայություն, դեղատան բացակայություն

² Բուժճառայությունների ոչ բավարար մատուցում/հասանելիություն, շտապօգնության ճառայության հասանելիության խնդիր

		աղիքային ինֆեկցիաների և սրտանոթային / հիպերտոնիկ հիվանդությունների ած	Բուժկետերի և բուժօժանոթությունների անբարվոք վիճակ	Նույնը, ինչ D1-D3 կետերում
16.	ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ	Կյանքի սպառնալիք	Վնասված տանիքների մասեր	Քարինջ, Շամուտ, Ահնիձոր, Աթան – տանիքների վերանորոգում/ամրացում
17.			Էլեկտրասյունների ընկնելու/էլեկտրալարե րի վնասվելու վտանգ	Կրող էլեկտրասյունների փոխարինում, Շամուտում վտանգ հանդիսացող բարձրավոլտ էլեկտրասյունների տեղափոխում /լարերը կախված են բնակելի տների տանիքների վրա/
18.			Բուժկետերի և բուժօժանոթությունների անբարվոք վիճակ	Նույնը, ինչ D1-D3 կետերում
19.	ՔԱՐԱԹԱՓՈՒՄ	Կյանքի սպառնալիք	Բնակավայրերն իրար կապող ճանապարհների անբարվոք վիճակ:	Արհեստական քարաթափում ճանապարհների առավել վտանգավոր հատվածներում
20.	ՍՈՂԱՆՔ	Կյանքի սպառնալիք	Ակտիվ սողանքային մարմին	Աթան – բնակավայր տանող շրջանցող ճանապարհի նորոգում /գյուղի հին ճանապարհը/
21.			Բուժկետերի և բուժօժանոթությունների անբարվոք վիճակ	Նույնը, ինչ D1-D3 կետերում
22.	ՍԵԼԱՎ	Սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացում	Ոչ լիարժեք ջրահեռացման համակարգ, կոյուղու անբարվոք վիճակ	Թումանյանում բարելավել սելավատարը/ջրահեռացման համակարգը
23.				Կոյուղու վերակառուցում/վերագործարկում

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D
24.	ԵՐԱՇՏ	Հողերի դեգրադացիա, վարելահողերը չեն օգտագործվում, վերածվել են խոտհարքների	Չորային եղանակների պարագայում ոռոգման խնդիր է առաջանում: Ոռոգման համակարգ չկա /նախկինում ոռոգելի հողեր չեն եղել/:	Հողերի կայուն կառավարում
25.				Բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում, հողագործության, ագրոտեխնիկայի և մելիորացիայի մասնագիտական խորհրդատվություն կազմակերպում
26.				Ջրի խնայողության և ոռոգման նոր տեխնոլոգիաների և երաշտադիմացկուն մշակաբույսերի ներդնում
27.	Խոտհարքների տապաստանացում	Խափանվում է խոտի բնական ածը, բերքատվությունը անկում է ապրում:	Նույնը, ինչ D2 կետում	
28.			Չորային եղանակի պատճառով խոտը արագ չորանում է, չեն հասցնում հավաքել, գյուղտեխնիկայի քանակը չի բավարարում:	Հիդրոօդերևութաբանական ագրոճառայությունների հասանելիության ապահովում /Բնապահպանության նախարարության հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն/ Ստեղծել համայնքային գյուղտեխնիկայի պարկ /Մարցում գործում է համայնքային տրանսպորտի և տեխնիկայի պարկ, կարելի է ընդլայնել պակասող գյուղտեխնիկայով/
29.			Մեծ քանակով ձիերի անկառավարելի երամակները արմատահան են անում խոտը, խորացնում են խոտհարքների տապաստանացումը:	Համայնքում փաստորեն տարածված է որ ֆորմալ ձիաբուծությունը: Հնարավոր է արդյունաբերական ձիաբուծության կառավարելի համակարգ ստեղծել:
30.	Դաշտամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի է:	Արտավայրեր տանող և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում		

31.		Բուսաբուծության, մշակաբույսերի, առկա այգիների	Այգեգործությամբ զբաղվելու մոտիվացված չեն, ռիսկային է և աշխատատար:	Նույնը, ինչ D2 կետում, նաև այգիների ապահովագրություն
32.		/հիմնականում տնամերձերում/ պահպանության, պաշտպանության, վերարտադրության սպառնալիք:	Ոռոգման խնդիր է առաջանում: Նախկինում ունեցած այգիները ոռոգելի չեն եղել:	Նույնը, ինչ D3 կետում
			Նախկին այգիների տարածքները մաս-մաս սեփականաշնորհվել են և բաժանված են մեծ քանակությամբ սեփականատերերի: Որևէ կոոպերացիան քիչ հավանական է համարվում:	Մասնագիտական խորհրդատվություն արդյունավետ կոոպերացիայի ժամանակակից մոտեցումների վերաբերյալ
33.		Խմելու ջրի սակավություն սնող աղբյուրների ցամաքման պատճառով:	Շատ բնակավայրերում տնամերձերի և անասունների խմելու համար օգտագործվում է խմելու ջուրը, ինչը նույնպես խմելու ջրի նվազեցման պատճառ է դառնում:	Խմելու ջրի ցանցի վերանորոգում, մաքրման համակարգի և կայուն կառավարման մեխանիզմների ներդնում:
34.		Անասնազխաքանակի նվազում:	Անասնակերի թանկացում Անասունների մորթը խնդրահարույց է, սպանդանոցը հասանելի և արդյունավետ չէ, բակային մորթ է իրականացվում, ինչն արգելված է: Մոտակա սպանդանոցը Օծունում է:	«Սմարթ անասնագուների» կիրառում Առաջարկվում է համալիր լուծում համայնքային մասնաժամանակ գրասենյակի ստեղծումով, որպես ՀՈԱԿ: Այն ունենալու է ժամանակակից սպանդանոցային լիարժեք ծառայություններ մատուցելու հնարավորություն, ինչպես նաև իր վրա է վերցնելու առաքման ողջ հոգսը: Մարցում առկա է համայնքային տարածք և կիսաքանդ գոմ, որը

			Առաքման խնդիրը նույնպես լուրջ է:	կարելի է վերականգնել և օգտագործել այս նպատակի համար: Հնարավոր է գործարկել նաև մասնավոր-հանրային համագործակցության մոտեցումները:
35.	Մենդի անվտանգության հարցեր:	Գյուղմթերքների արտադրության անկում բերքի կորստի պատճառով		
		Պահեստավորման և առաքման խնդիրներ	Համայնքային պահեստավորման, առաքման և առևտրի բազայի ստեղծում	
		Գյուղմթերքների ժամանակակից տեխնոլոգիական կարողությունների բացակայություն	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման նախաձեռնում, գյուղմթերքների և պահածոների փոքր ձեռնարկությունների ստեղծում	
36.	Մեղվաբուծություն . մեղրի բերքի անկում	Բույսերի ծաղկման շրջանի տեղաշարժի պատճառով առաջանում է մեղուների հիվանդությունների աճ, մեղվաընտանիքների կորուստ և բերքի նվազում	Մեղվաբուծության մեջ մեղուների հիվանդությունների բուժման ժամանակակից մեթոդների և նոր կենսաբանական դեղամիջոցների կիրառման վերաբերյալ խորհրդատվության և փորձի փոխանակման կազմակերպում	
37.	Զրային ռեսուրսի նվազման և հասանելիության սպառնալիք, արոտավայրերում խմոցների խնդիր է առաջանում	Չորային եղանակ, սակավաջրություն	Արոտավայրերում խմոցների ստեղծում, մասնավորապես Ահնիձորում:	
		Եղած ջրերի անարդյունավետ օգտագործում	Քարինջում ուսումնասիրել եղած ջրային պաշարների արդյունավետ օգտագործման հնարավորությունները ոռոգման համակարգ կառուցելու համար: Նախադրյալներ և պաշարներ կան, հնարավոր է ջրի առկա կորուստը կանխել:	
38.	ԿԱՐԿՈՒՏ	Բերքի/եկամուտի կորուստ	Հակակարկտային արդյունավետ համակարգի բացակայություն	Հիդրոօդերևութաբանական ազրոծառայությունների հասանելիության ապահովում /Բնապահպանության

				<p>նախարարության հիդրոտեխնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն/</p> <p>Հակակարկտային արդյունավետ համակարգի ներդրում /օրինակ, հակակարկտային ցանցեր/</p> <p>Ռիսկի փոխանցում/ապահովագրություն</p>
39.	ԳԵՏԻ ՎԱՐԱՐՈՒՄ, ՀԵՂԵՂՈՒՄ	Շենքերի, շինությունների և տարածքների ջրածածկում, վնասում	Թումանյանում վտանգի տակ են Դեբեդի առափնյա տնամերձերը, հողատարածքները, արտադրական և առևտրային ձեռնարկությունները:	Գետի հունի մաքրման և ափապաշտպան միջոցառումների իրագործում, ներդնել գետավազանային կայուն կառավարման սկզբունքները /Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն/: Թումանյանում բնակիչները Դեբեդի առափնյա տարածքներում ձկնաբուծության զարգացման հեռանկար են տեսնում: Միևնույն ժամանակ ուսումնասիրված չէ ձկնաբուծության հետ կապված շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վտանգների և գետի էկոհամակարգի պահպանման հարցերը: Ուսումնասիրված չէ նաև սելավային վտանգի և հեղեղումների, գետի ջրի վերաօգտագործման ու վերաշրջանառության, էկոհամակարգերի պահպանության համազդեցություններից բխող ռիսկերը:
40.			Լորտում վտանգված է ամառանոցային արտոտավայր տանող կամուրջը, մարդկանց և անասուններին վնաս կարող է հասցվել:	Կամրջի ամրացման աշխատանքների իրականացում

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D
41.	ԵՐԱՇՏ	Սակավաջրություն, ոռոգման ջրի պակաս	Ջրային պաշարների ոչ արդյունավետ օգտագործում	Ջրախնայող և ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, ջրակուտակման պահուստների ստեղծում
42.				Համայնքի ջրային ռեսուրսների ճգնաժամային կառավարման հայեցակարգի և, վատագույն սցենարների վրա հիմնված, ռեգերվային պլանների կազմում
43.				Քարինջում ոռոգման համակարգի կառուցում, օգտագործելով առկա տեխնիկական ջրի պաշարները
44.				Խմելու ջրի պակասություն
45.	ՍԵԼԱՎ	Անորակ խմելու ջրի սպառնալիք	Խմելու ջրի համակարգի խաթարում, աղտոտվածություն	Ողջ համայնքում ջրամաքրման համակարգի ներդրում /քիմիական կամ կենսաբանական/ Թումանյանում սելավատարր/ջրահեռացման համակարգի բարելավում, կոյուղու վերակառուցում
46.				Մարցում կենտրոնում գտնվող աղբյուրի վնասազերծում կեղտաջրերից
47.				Շամուտում ապահովել խմելու ջրի ավազանի անվտանգությունը սելավից /տեղադրված է սելավատարի ներսում/ և աղտոտվածությունից
48.				

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՅՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԴԱՏՃԱՌԸ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D
49.	ՍԱՍՏԻԿ ՇՈԳ	Սննդի անվտանգության և սննդի անխափան մատակարարման հիմնախնդիրներ	Բերքի/եկամուտի կորուստ	Ռիսկի փոխանցում/բիզնեսի ապահովագրություն
50.				Հիդրոոդերևութաբանական երկարաժամկետ և կարճաժամկետ կանխատեսումների հասանելիության /Բնապահպանության նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն/
51.		Ջրամատակարարում, խմելու ջրի անվտանգություն և հասանելիություն	Խմելու ջրի ցանցի անբարվոք վիճակ	Խմելու ջրի մատակարարման ցանցի նորոգում, մաքրման համակարգի տեղադրում /կենսաբանական կամ քիմիական/
52.		Հյուրանոցների/տների հովացման խնդիր, դրանից բխող ծառայության ծախսերի աճ, զբոսաշրջային բիզնեսի օպերացիոն ծախսերի թանգացում	Անմրցունակությանակություն, ոլորտի իմացության և բիզնեսի կառավարման խնդիր	Ստեղծել տուրիզմին աջակցող համայնքային խորհրդատվական պորտալ, օգտագործել մասնավոր սեկտորի և երիտասարդ կամավորական խմբերի ուժերը
53.		Ռիսկի փոխանցում/բիզնեսի ապահովագրություն		
54.		Բժշկական ծառայությունների սահմանափակ մատուցում	Բուժսպասարկման թերի համակարգ	Նույնը ինչ D8 կետում
55.				Շտապօգնության հասանելիության խնդիր

56.	ԵՐԱՇՏ	Սննդամթերքի թանկացման պատճառով, զբոսաշրջության ծառայությունների թանկացում, եկամուտների անկում	Անմրցունակությանակություն, ոլորտի իմացության և քիզնեսի կառավարման խնդիր	Ստեղծել տուրիզմին աջակցող համայնքային խորհրդատվական պորտալ, օգտագործելով մասնավոր սեկտորի և երիտասարդ կամավորական խմբերի ուժերը
57.		Սննդի անվտանգության և սննդի անխափան մատակարարման հիմնախնդիրներ		Ռիսկի փոխանցում/քիզնեսի ապահովագրություն
58.		Սակավաջրություն և խմելու ջրի անվտանգության և հասանելիության խնդիր	Խմելու ջրի ցանցի անբարվոք վիճակ	Նույնն է ինչ D3
59.		Որակյալ և ժամանակին բուժսպասարկման բացակայություն	Բուժսպասարկման թույլ համակարգ	Նույնն է ինչ D6
60.	ՍԵԼԱՎ	Ճանապարհների վատ վիճակի պատճառով առաջանում է հասանելիության խնդիր,	Ոչ լիարժեք ջրահեռացման համակարգ	Ճանապարհների վիճակը բարելավելու համար, վերնորոգելուն զուգընթաց ջրահեռացման համակարգի կառուցում
61.		ճանապարհների անվտանգության խնդիրները ուսումնասիրված և մշակված չեն		Դաշտային ճանապարհների, արահետների բարեկարգում/նորոգում

62.		Նույնը վերաբերվում է զբոսաշրջային երթուղիներին:	Գիտելիքի և հմտությունների պակաս, զբոսաշրջությանը օժանդակող ծառայությունների պակաս	Համայնքի զբոսաշրջության ուղեցույցի մշակում՝ նախապես ուսումնասիրված անվտանգ երթուղիներով և այլընտրանքային ուղիներով
63.		Անվտանգ երթուղիներ և կայանատեղեր մշակված չեն:		Նույնը ինչ D51 կետում
64.	ԴԱՇՏԱՅԻՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐ	Անվտանգության պահպանման կարգ մշակված չէ մարդու բացասական ազդեցությունը նվազեցնելու, մասնավորապես, զբոսաշրջիկների կողմից աղբի հետ վարվելու և անտառի հակահրդեհային կանոնները պահպանելու առումով:	Մարդկային գործոն, իրազեկվածության և վերահսկողության պակաս	Անվտանգության պահպանման նորմերի տարածում, բնակչության իրազեկում և ուսուցում մարդու բացասական ազդեցությունը նվազեցնելու, մասնավորապես, զբոսաշրջիկների կողմից աղբի հետ վարվելու և անտառի հակահրդեհային կանոնները պահպանելու առումով:
65.				Անտառում հակահրդեհային կանոնների ցուցանակների տեղադրում
66.				Զբոսաշրջությունից գոյացող աղբի կառավարում

ԷՆԵԳԵՏԻԿԱՅԻՆ ՍՊԱՌԵԱՑՈՂ ԱՌԱՋՆԱՇԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅԴ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D
67.	ՑՐՏԱՇՈՒՆՉ ՁՄԵՌ	Անտառափայտի ռեսուրսի նվազում, անտառահատումների աճ	Տների ջեռուցման սուր խնդիր	Անտառկառավարման, անտառի մոնիթորինգի արդյունավետության բարձրացում
68.				Էկոհամակարգային ծառայությունների ներդրում

69.		Էներգետիկ համակարգի վնասում		Թումանյանում, քաղաքին բնորոշ ուրույն ճարտարապետությամբ, լավ պահպանված բազմաբնակարան շենքեր կան, որոնք հարմար են էներգախնայողական և ժամանակակից էներգետիկ լուծումների համար:
70.				Տաքացման այլընտրանքային էներգետիկ լուծումների կիրառում, էներգախնայողության մշակույթի ձևավորում
71.				Այլընտրանքային էներգետիկայի մասին բնակչության իրազեկվածության բարձրացում և խորհրդատվություն
72.				Բնակչությանը օժանդակելու համայնքային ԱՌԿ շրջանառու ֆոնդի ստեղծում
73.				Բարձր ջերմատվության վառարանների կիրառում
74.	ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ	Էլեկտրամատակարարման խաթարում	Համակարգի գերծանրաբեռնվածություն	Համակարգի պլանային մոնիթորինգի անցկացում, ձմեռային ռեժիմում աշխատելուն նպաստելու կանխարգելիչ քայլերի մշակում և իրականացում, էլեկտրաէներգիայի օգտագործման վերահսկման ուժեղացում
75.		Էներգետիկ, կապի և հաղորդակցության համակարգի խաթարում	Հին ու վնասված էլեկտրասյուներ	Կրող էլեկտրասյուների փոխարինում Էներգահամակարգի սպասարկման և մոնիթորինգի աշխատանքների արդյունավետության բարելավում

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ՍՊԱՌԱՑՈՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՅՐ ՌԻՍԿԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#	ՎՏԱՆԳ	ՌԻՍԿ	ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՆ ԴԱՏՃԱՌԸ	ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
	A	B	C	D

76.	ՍԵԼԱՎ	Ճանապարհների վնասում	Ջրահեռացման համակարգի անկատարության կամ բացակայության պատճառով ներքին ճանապարհների անվտանգության, հասանելիության և որակի խաթարման սպառնալիք	Ջրահեռացման համակարգերի կառուցում/նորոգում
77.		Ջրամատակարարման խաթարում	Ջրային ցանցի վնասում, ջրի կորուստ, սանիտարահիգիենիկ պայմանների վատթարացում:	Նույնը ինչ 40-43 կետերում
78.				
79.				
80.				
81.	ԱՌԱՏ ՏԵՂՈՒՄՆԵՐ	Բնակավայրի ներքին ճանապարհների փլուզում	Նույնը ինչ C1 կետում	Նույնը ինչ D1 կետում
82.		Քարինջի դպրոցի շենքի հիմքի վնասում, դպրոցի կոյուղաջրերի արտահոսք	Ջրհորդաններից արտահոսող ջրի համար ջրահեռացում չի նախատեսվել Նախկինում գործող կոյուղագիծը վնասված է	Դպրոցի շուրջը դրենաժային համակարգի կառուցում: Կոյուղաջրերի հեռացման համակարգի վերականգնում:
83.		Սողանքի ակտիվացում Աթանում և Շամուտում	Աթան մտնող ճանապարհը ակտիվ սողանքի վրա է: Պայթեցում է կատարվել, որից հետո վիճակն ավելի է վատթարացել: Գյուղի տների մեծ մասը նույնպես սողանաքավտանգ գոտում են: Դպրոցի խոհանոցի օգտագործված ջրերը կոյուղաջրերը թափվում են շենքի պատերի անմիջապես	Աթան տանող շրջանցիկ ճանապարհի նորոգում /գյուղի հին ճանապարհը/:
84.				Աթանի սողանաքավտանգ գոտիներում տեղակայված տների և սողանքի ուսումնասիրում և համապատասխան աշխատանքների իրականացում, ընդհուպ մինչև մարդկանց վերաբնակեցում:
85.				Աթանի դպրոցի տարածքի սողանքային ռիսկի գնահատում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան աշխատանքների իրականացում: Դպրոցի հարևանությամբ գտնվող

			<p>հարևանությամբ, վնասելով հիմքերը: Շենքի ետնամասում սողանքային մարմին է:</p> <p>Շամուտ – գյուղապետարանի դիմացն ընկած ձորակի երկու կողմում գտնվող տների մեծ մասը ակտիվ սողանքի գոտում է գտնվում:</p> <p>Սողանքների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը շատ ցածր է: Շատերը արդեն ակտիվ սողանքի վրա բանջարեղեն են աճեցնում և անընդհատ ջրում:</p>	<p>կոյուղու միջոցով հեռացնել դպրոցից արտահոսող ջրերը:</p>
86.				<p>Շամուտի որոշ վտանգված տներից մարդկանց վերաբնակեցում:</p>
87.				<p>Բնակչության իրազեկվածության բարձրացում:</p>
88.		<p>Թումանյանում վտանգի տակ են Դեբեդի առափնյա տնամերձերը, հողատարածքները, արտադրական և առևտրային ձեռնարկությունները:</p>	<p>Գետի վարարում, հեղեղում</p>	<p>Գետի հունի մաքրման և ափապաշտպան միջոցառումների իրագործում, ներդնելով գետավազանային կայուն կառավարման սկզբունքները /Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն/:</p>
89.				<p>Թումանյանում բնակիչները Դեբեդի առափնյա տարածքներում ձկնաբուծության զարգացման հեռանկար են տեսնում: Միևնույն ժամանակ ուսումնասիրված չէ ձկնաբուծության հետ կապված շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վտանգների և գետի էկոհամակարգի պահպանման հարցերը: Ուսումնասիրված չի նաև սելավային վտանգի և հեղեղումների, գետի ջրի վերաօգտագործման ու վերաշրջանառության, էկոհամակարգերի պահպանության համազդեցություններից բխող ռիսկերը:</p>

90.		Լորուտում վտանգված է ամառանոցային արոտավայր տանող կամուրջը, մարդկանց և անասուններին վնաս կարող է հասցվել		Լորուտում կամրջի ամրացման աշխատանքների իրականացում
91.	ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ	Կյանքի սպառնալիք	Վնասված տանիքների մասեր	Քարինջ, Շամուտ, Ահնիձոր, Աթան – տանիքների վերանորոգում/ամրացում
92.		Էներգահամակարգի ենթակառուցվածքների վնասում	Էլեկտրասյուների ընկնելու/էլեկտրալարերի վնասվելու վտանգ	Կրող էլեկտրասյուների փոխարինում
93.				Շամուտում վտանգ հանդիսացող բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխում /լարերը կախված են բնակելի տների տանիքների վրա/
94.	ՔԱՐԱԹԱՓՈՒՄ	Կյանքի և տրանսպորտային միջոցի/գույքի կորստի սպառնալիք	Վտանգավոր են բնակավայրերն իրար կապող ճանապարհները՝ քարաթափման աշխատանքներ չի կատարվում	Քարինջ, Մարց, Լորուտ տանող ճանապարհներին իրավիճակի մոնիթորինգի կազմակերպում, արհեստական քարաթափում ճանապարհների առավել վտանգավոր հատվածներում
95.	ՍՈՂԱՆՔ	Կյանքի սպառնալիք	Նույնը ինչ C4 կետում	Նույնը ինչ D4 կետում

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԼԻՄԱՅԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱԿԵՐԹ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

18-19 ՆՈՒԵՄԲԵՐ, 2021

Համայնքային մակարդակ

55, 60, 76 – Ներբնակավայրային ճանապարհների վերանորոգում/կառուցում:

7, 15, 33, 44, 45, 51, 58 – Խմելու ջրի հասանելիության և անվտանգության ապահովում:

9, 12, 55 – Փրկարարական, հրշեջ և շտապօգնության ծառայությունների տեղայնացում (Լորուտի բուժկետը հարմար է փրկարարական և առաջին օգնության համայնքային թիմեր ստեղծելու համար, իսկ Մարցում գտնվող տեխնիկատրանսպորտային ՀՈԱԿ-ը՝ հրշեջ ծառայություն կազմակերպելու համար):

8, 9, 15, 18, 21, 54 – Բուժկետերի ընդլայնում/վերանորոգում/կառուցում և համապատասխանեցում բուժհաստատություններին և բուժսպասարկմանը վերապահվող պահանջներին (մասնավորապես՝ մշտական հոսանք, հոսող ջուր, կոյուղի, սանիտարա-հիգիենիկ պայմաններ, առաջին անհրաժեշտության դեղամիջոցներ):

17, 66, 69-71, 74, 75, 92, 93 – Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում և էներգետիկ համակարգի անվտանգության ապահովում (հին ենթակայաններ՝ լարման պարբերական անկում, հին հոսանքագծեր, հին և դիրքը փոխած հենասյուններ):

25-27, 29 – Խոտհարքի վերաձված վարելահողերի կատեգորիայի վերանայում:

8, 36 – Դեղատնային ծառայության և դեղորայքի հասանելիության ապահովում (համայնքում ընդհանրապես դեղատուն չկա):

Թումանյան քաղաք

22, 46 – Ճանապարհների ջրահեռացման համակարգի կառուցում:

69-73 – Բազմաբնակարան շենքերում ջեռուցման արդյունավետ տեխնոլոգիաների և էներգախնայողության մոտեցումների կիրառում:

23, 46 – Կոյուղու վերակառուցում/վերագործարկում:

Շամուտ

16, 91 – Տանիքների վերանորոգում/ամրացում

17, 93 – Բարձր լարման հոսանքագծերի անվտանգության ապահովում:

86, 87 – Մարդու կյանքին և առողջությանը սպառնացող սողանքային գոտիների ուսումնասիրում, հակասողանքային աշխատանքների իրականացում, և, անհրաժեշտության դեպքում, հնարավոր է որոշ ընտանիքների վերաբնակեցման կարիք առաջանա:

Լորուտ

5, 30 – Արոտավայրերի և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում/ջրահեռացում:

94 – Բնակավայր տանող քարաթափման վտանգի ենթարկված տեղանքի ուսումնասիրում, գույքագրում, աշխատանքների պլանավորում և իրագործում:

Քարինջ

16, 91 – Տանիքների վերանորոգում/ամրացում

82 – Դպրոցի շուրջը դրենաժային համակարգի կառուցում: Կոյուղաջրերի հեռացման համակարգի վերականգնում:

94 – Բնակավայր տանող քարաթափման վտանգի ենթարկված տեղանքի ուսումնասիրում, գույքագրում, աշխատանքների պլանավորում և իրագործում:

Մարց

94 – Բնակավայր տանող քարաթափման վտանգի ենթարկված տեղանքի ուսումնասիրում, գույքագրում, աշխատանքների պլանավորում և իրագործում:

11 – Նախադպրոցական հասակի երեխաների կազմակերպված ուսուցման, ֆիզիկական զարգացման և խնամքի պատշաճ պայմանների ստեղծում /մանկապարտեզ կամ նման մի կառույց գոյություն չունի, որտեղ ուշադրության կենտրոնում կլինեն նաև ծայրահեղ եղանակային պայմաններում երեխաների առողջական վիճակը/

Ահնիձոր

16, 91 – Տանիքների վերանորոգում/ամրացում

37 – Արտավայրերում խմոցների ստեղծում

5, 30 – Արտավայրերի և դաշտամիջան ճանապարհների վերանորոգում/ջրահեռացում:

Աթան

16, 91 – Տանիքների վերանորոգում/ամրացում

20, 83 – Բնակավայր տանող ճանապարհին սպառնացող ակտիվ սողանքի պատճառով, շրջանցիկ ճանապարհի նորոգում և գործարկման ապահովում /խոսքը գյուղի հին ճանապարհի մասին է/:

84 – Բնակավայրի սողանաքավտանգ գոտիներում տեղակայված տների և սողանքի ուսումնասիրում և համապատասխան աշխատանքների իրականացում, ընդհուպ մինչև մարդկանց վերաբնակեցում:

85 – Դպրոցի տարածքի սողանքային ռիսկի գնահատում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան աշխատանքների իրականացում: Դպրոցի հարևանությամբ գտնվող կոյուղու միջոցով հեռացնել դպրոցից արտահոսող ջրերը:

ԱՌԱՆՁԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Ստորև ներկայացված են որոշ հարցերին վերաբերվող նկատառումներ, որոնք կամ տեղ չեն գտել Ալավերդի քաղաքի վերը բերված կլիմայական ռիսկերի բացահայտման և հարմարվողականության ռազմավարությունների առաջարկների աղյուսակներում, կամ էլ պահանջում են հավելյալ պարզաբանումներ:

1. Ալավերդի քաղաքի համար չի ներկայացված էներգետիկայի ոլորտը: Բանը նրանումն է, որ Ալավերդի համայնքի զարգացման պլանում էներգետիկայի ոլորտը կլիմայի տեսանկյունից արդեն նախատեսված է: Մասնավորապես, պլանային աշխատանքներ են տարվում քաղաքի լուսավորությունը էներգախնայող լեդ լամպերով փոխարինելու ուղղությամբ, նաև նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի կառուցում: Այս աշխատանքները իրականացվում են Ալավերդի համայնքում ջերմոցային գազերի արտանետումը նվազեցնելու նպատակով /նվազեցման տարեկան ծավալները հաշվարկված են և ընդունված են որպես թիրախ/: Այս առումով, նպատակահարմար է նաև ուսումնասիրել բազմաբնակարան շենքերում էներգախնայողության տեխնիկական լուծումների հնարավորությունը: Ձմռան սեզոնին այդ շենքերում ջեռուցման համար օգտագործվում է գազ, էլեկտրական հոսանք կամ փայտ: Գործազրկության բարձր տոկոսի պայմաններում, շատերն անցել են միայն փայտի, ակամա ավելացնելով բեռը անտառի վրա: Շենքերի էներգախնայողության աստիճանը բարձրացնելը էականորեն կնվազեցնի ջեռուցման համար կատարվող ծախսը:
2. Ալավերդի քաղաքի և Թումանյան համայնքի համար չի ներկայացված նաև 'էկոհամակարգեր և կենսաբազմազանություն' ոլորտը: Այս ոլորտը լոկալիզացնել գործնականում հնարավոր չէ, քանի որ այն մեծ տարածքներ է ներառում /Դեբեդի գետավազան, Մոտկորի անտառ, և այլն/ և մեկ քաղաքի կամ անգամ խոշորացված համայնքի սահմաններով չի բնորոշվում: Դրան գումարած, Ալավերդին չունի նման մասնագետներ, կամ նյութի մասին բավարար իմացություն ունեցող մարդիկ: Չկա նաև Ալավերդում բնորոշ առանձին տեղեկատվություն քաղաքի սահմաններում առկա էկոհամակարգերի և կենսաբազմազանության մանրամասների վերաբերյալ: Բնակչությունը հիմնականում կամ անտեղյակ է այդ ոլորտի վիճակից, կամ ուղղակի բառակապակցությունը լսել է, բայց չգիտի դա ինչ է: Նման իրավիճակում, փորձագիտական խումբը ենթադրում է, որ էկոհամակարգերի և կենսաբազմազանության ոլորտի կլիմայի հարմարվողականության մոտեցումները պետք է մշակվեն նախ ազգային մակարդակում, տեղական մակարդակը ներգրավելով իրականացման փուլում, ինչը բնակչությունից և համայնքի ղեկավարությունից պահանջելու է նաև գիտելիքի և ընկալելիության որոշակի մակարդակ:
3. Կարիք կա առանձին նշելու, որ թե Ալավերդի քաղաքում, և թե Թումանյան համայնքում մեծ աշխատանք է իրականացվել աղետների ռիսկի բացահայտման և կառավարման ուղղությամբ /ՏՄՌԿ ուսումնասիրություն, համայնքի ԱՌԿ պլաններ, դպրոցների ԱՌԿ պլաններ և այլն/: Հարցումները ցույց տվեցին, որ բնակչությունը նման պլանների գոյության մասին ընդհանրապես պատկերացում չունի: Ցավոք, այդ բոլոր ուսումնասիրությունների արդյունքները, կամ պլանները տեղ չեն գտել համայնքի զարգացման պլաններում: Սա կարևոր բաց է, որ պետք է, նախ, արձանագրվի: Իսկ հետագայում, այդ նյութերը

պետք է հաշվի առնվեն ոլորտային զարգացման յուրաքանչյուր ծրագիր մշակելիս, ապահովելով վերջիններիս համապատասխանելիությունը համակարգի ռիսկայնության պատկերին:

4. Կլիմայի փոփոխության, կլիմայական վտանգների և դրանց դիմակայելու վերաբերյալ բնակչության իրազեկվածության և գիտելիքի մակարդակը շատ ցածր է: Ցածր է նաև համայնքում միասնական որոշումներ ընդունելու, կոոպերացիաներ ստեղծելու կամ որևէ կոլեկտիվ նախաձեռնություններ ձեռնարկելու հավանականությունը: Հարմարվողականության ծրագրերում նման բացը շատ էական է, քանի որ, անգամ նորագույն տեխնոլոգիական լուծումների առկայության պարագայում, նման ծրագրերի հաջողությամբ պսակվելու հավանականությունը մեծապես պայմանավորված է համայնքի կողմից ակնկալվող փոփոխությունների նկատմամբ սեփական դերի գիտակցությամբ և պատասխանատվություն վերցնելու վճռականությամբ: